ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս (37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

14.12.2023թ.

N 01-14/490

«ԱԼՖԱ-ԷՏԱԼՈՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարկոսյան

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի (այսուհետ նաև՝ հիմնադրամ) կարիքների համար 2023 թվականի փետրվարի 20-ին հայտարարված համակարգչային սարքավորումների և օժանդակ սարքերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 2-րդ, 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00454717, հեռ.՝ 098-40-05-59, էլեկտրոնային հասցե՝ alfaetalonamgmail.com), վերջինիս հետ 19.04.2023թ-ին կնքվել է ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի ընդհանուր գինը կազմում է 616800 (վեց հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, իսկ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 20 օրացուցային օր՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված, սակայն մատակարարումները իրականացվել են միայն 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ 4-րդ չափաբաժնի մասով գնման առարկա հանդիսացող սեղանի համակարգչի մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ 4-րդ չափաբաժնի մասով մատակարարման ժամկետները էականորեն խախտվել են՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 ենթակետը, Հիմնադրամի կողմից 12.12.2023թ-ից ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք սահմանված կարգով և ժամկետներում ապահովել պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով պայմանագրի կատարման ապահովման՝ 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովման՝ 187500 (մեկ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Գ. ՔԱՌՅԱՆ